PIN կոդ սահմանելու ուղեցույց

Հարգելի հաճախորդ,

Քարտը Յունիբանկի մասնաճյուղում ստանալուց հետո հարկավոր է այն ակտիվացնել: Քարտի ակտիվացումը կատարվում է Ձեր կողմից PIN կոդի սահմանման միջոցով: Քարտի PIN կոդի սահմանումը կատարվում է միայն «Յունիբանկ» ԲԲԸ-ի բանկոմատների միջոցով և քարտը բանկոմատ մուտքագրելու տարբերակով (ոչ NFC տարբերակով):

PIN կոդ սահմանելու համար հարկավոր է Յունիբանկի բանկոմատի միջոցով կատարել հետևյալ գործողությունները.

- Քարտը մուտքագրել բանկոմատ, որից հետո բանկոմատի էկրանին կբացվի համապատասխան հրահանգներով պատուհան, որում հարկավոր է ընտրել «Ակտիվացնել քարտը» հրահանգը:

- SMS հաղորդագրության միջոցով դուք կստանաք մեկանգամյա կոդ, որն անհրաժեշտ է մուտքագրել բացված պատուհանում: SMS հաղորդագրությունն ուղարկվում է այն հեռախոսահամարին, որը տրամադրել եք բանկին՝ քարտի համար դիմելու ժամանակ, և նշել, որ քարտով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունները ուղարկվեն տվյալ հեռախոսահամարին:

- Ստացված մեկանգամյա կոդը հարկավոր է մուտքագրել բացված համապատասխան պատուհանում:

SMS հաղորդագրություն չստանալու դեպքում անհրաժեշտ է մոտենալ մասնաճյուղի աշխատակցին (եթե գտնվում եք մասնաճյուղում կամ դրա հարևանությամբ), կամ կապվել քարտի ետնամասում նշված հեռահոսահամարով՝ ձեր կողմից տրամադրված հեռախոսահամարը ճշտելու համար:

Եթե սխալ եք մուտքագրում մեկանգամյա կոդը, ապա բանկոմատի էկրանին հայտնվում է համապատասխան գրառում, և բանկոմատը քարտը դուրս է հանում: Այդ դեպքում հարկավոր է սկզբից կատարել նշված գործողությունները: Մեկանգամյա կոդը սխալ մուտքագրելուց հետո տվյալ կոդը համարվում է անվավեր և բանկի կողմից ուղարկվում է նոր կոդ: Մի քանի անգամ մեկանգամյա կոդը սխալ հավաքելու

դեպքում քարտը չի արգելափակվում: Այն կարող է մուտքագրվել անսահմանափակ քանակությամբ:

Եթե մեկանգամյա կոդը ճիշտ է մուտքագրված, ապա բանկոմատի վրա բացվում է նոր պատուհան՝ Ձեր կողմից սահմանված նոր PIN կոդը երկու անգամ մուտքագրելու համար: PIN կոդի սահմանումը բարեհաջող ավարտելուց հետո քարտի կարգավիճակը կփոխվի ակտիվ կարգավիճակի, որի մասին կստանաք SMS հաղորդագրություն:
PIN կոդի սահմանման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի դեպքում կարող եք դիմել քարտի ետնամասում նշված հեռախոսահամարներով: